թյան քննաբանության բանասիրական շրջանն ավարտվել կամ գրեթե ավարտվել է, և ժամանակն է լրջորեն զբաղվել այդ երկերի գրականագիտական ուսումնասիրությամբ ու գնահատմամբ, որը նոր վերլուծումների մեկնակետեր է պարունակում: Այդ առումով, այս աշխատության մեջ փորձել ենք առավելապես գնալ գրականագիտական վերլուծության, քան բանասիրական պրպտումների ճանապարհով: Առաջնահերթ նշանակությունը տրվել է առկա տեքստին, իսկ բանասիրական բնույթի քննություններն ու զուգադրումներն արվել են խիստ անհրաժեշտության դեպքում միայն: Վերլուծության համար կիրառվել են թե՛ ավանդական, թե՛ արդի գրականագիտական մեթոդներ՝ սկսած պատմա-համեմատականից մինչև տեքստաբանական ու կառուցվածքային:

Աշխատության կառուցվածքն ինքնին բացապարզում է բուն խնդրադրությունը և պայմանավորված է Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունն իբրև ***գրական երկ*** կազմաբանող հատկականություններով: Ելնելով այն հանգամանքից, որ ***գրական երկը կազմաբանվում է նախևառաջ ժանրային համակարգով, գրական տարբեր ժանրերի համադրական կիրառությամբ, գրական երկերին բնորոշ կառուցվածքային օրինաչափություններով և,*** բնականաբար, ***գեղարվեստական արժեքով,*** աշխատության երեք հիմնական գլուխներում նյութի ընձեռած հնարավորությունների սահմաններում քննաբանվում են՝ Դավրիժեցու Պատմության ժանրային նկարագիրը, կառուցվածքը և գեղարվեստական արժեքը: Նկատի առնելով այն պարագան, որ պատմագրական երկը համադրական է ոչ միայն իր ընդհանրականության մեջ, այլև մասնավորությունների պարագային, որոշ հարցադրումներ դիտարկվել նաև առանձին ամբողջության մեջ, ուստի՝ առանձնացված գլուխները հարկ եղավ բաժանել նաև ենթագլուխների: